Հուսիկ Արա

Ես աշխարհը չէի փոխի

Գուցե ապրեմ քեզնից հեռու,
Բայց կլինեմ առանց կյանք:

Քեզ չեմ ավելացնում,
չեմ պակասեցնում քեզնից.
դու կատարյալն ես:
Հիմա դու ես Աստված,
որովհետև աղոթում եմ քեզ:

Կերկրպագեմ անգամ նրան,
ով իր ճարպիկ օրերում կունենա քեզ,
իմ վրիպած ես:
Թեկուզ այս հեգնանքի համար ճակատագրի,
բախտից խռով ու աշխարհից,
քեզնից գնամ անդարձ:

Քեզ փնտրել եմ երկար ու հեռու.
ինձ համար լույս ես,
խաղաղություն,
խիղճ ես բովանդակ,
անդորր ու հանգստություն,
բայց ինչո՞ւ ես ինձ սպանում:

Արժեր ծնվել
քեզ գտնելու համար,
իսկ հիմա մեռնում եմ անափսոս
քեզ կորցնելու դիմաց:

Թե կախարդական փայտիկը տային ինձ,
ես աշխարհը չէի փոխի.
բավական ես դու
կյանքը անթերի տեսնելու համար: